

«ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

«ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Սոցիալական աջակցության մասին» Հայաստանի Հանրապետության 2014 թվականի դեկտեմբերի 17-ի ՀՕ-231-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 2-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ կետի «լիազորած պետական կառավարման մարմնի և գործադիր իշխանության տարածքային կառավարման մարմնի ստորաբաժանումներ» բառերը փոխարինել «լիազորած պետական մարմնի և պետական մարմնի տարածքային ստորաբաժանումներ»:

Հոդված 2. Օրենքի 22-րդ հոդվածի վերնագրի «պետական կառավարման մարմնի» բառերը փոխարինել «պետական մարմնի» բառերով, իսկ 1-ին մասի «պետական կառավարման մարմինը» բառերը՝ «պետական մարմինը» բառերով:

Հոդված 3. Օրենքի 36.2-րդ հոդվածի 3-րդ մասի «պետական կառավարման մարմնի» բառերը փոխարինել «պետական մարմնի» բառերով:

Հոդված 4. Օրենքի 40-րդ հոդվածի 8-րդ մասի «Պետական կառավարման» բառերը փոխարինել «Պետական մարմինները» բառերով:

Հոդված 5. Օրենքի 42-րդ հոդվածի 4-րդ մասի «Պետական կառավարման» բառերը փոխարինել «Պետական մարմինները» բառերով:

Հոդված 6. Օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ, 11-րդ, 13-րդ կետերի, 25-րդ հոդվածի 6-9-րդ, 11-րդ մասերի, 26-րդ հոդվածի 2-րդ մասի, 30-րդ հոդվածի 2-րդ և 4-րդ մասերի, 31-րդ հոդվածի 1-ին մասի, 35-րդ հոդվածի 2-րդ մասի, 36.1-ին հոդվածի 1-ին և 3-րդ մասերի, 32.2-րդ հոդվածի 1-ին մասի, 37-րդ հոդվածի 2-րդ մասի, 40-րդ հոդվածի վերնագրի, 1-ին, 2-րդ և 9-րդ մասերի, 41-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետի և 46-րդ հոդվածի 6-րդ մասի

«պետական մարմնի աշխատակազմում» բառերը փոխարինել «պետական մարմնում» բառերով:

Հոդված 7. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակաման օրվան հաջորդող տասներորդ օրը:

